

**ԴԱՍ 1.15. Ֆրանսիայի Հանրապետություն:  
Աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն  
ու ռեսուրսները, բնակչությունը**

Ֆրանսիացի ֆիզիկոսները հաստատեցին էլեկտրաստատիկական փոխազդեցության ուժի որոշման օրենքը, հայտնաբերեցին էլեկտրական հոսանքի ուժի միավորը, լույսի բևեռացումը, ջրում և օդում չափեցին լույսի արագությունը, հիմք դրեցին գունավոր լուսանկարչությանը:

**Ֆրանսիացի մաթեմատիկոսները** զարգացրին գծային դիֆերենցիալ հավասարումների ընդհանուր տեսությունը, հիմնավորեցին անվերջ փոքրերի հաշիվը, մշակեցին մաթեմատիկական անալիզի առաջին թեորեմները, Կոլմոսի շարքերի տեսության, դիֆերենցիալ ու ինտեգրալ հաշիվների շարադրումը: **Ֆրանսիացի քիմիկոսները** հայտնագործեցին գազերի ջերմային ընդարձակման, գազերի ծավալային հարաբերությունների օրենքները, քրոմը, բերիլիումը, յոդը, բրոմը, մեզոնը, դոլոմիտը, ացեթոնից սինթեզեցին գլիցերինը, սպացան նիտրոմետաքսը: Ստեղծեցին շոգեքարշով առաջին սայլակառքը, գեյսային անվային շոգենավերը, առաջարկեցին այլումինի, պողպատի և թուջի սպացման արդյունաբերական եղանակները: Այդպեղ արտոնագրվեց երկաթբեթոնը, արեղծվեց փառապալիչ հեռախոսային սարքը, գունավոր հեռուստատեսության «ՄԵԿԱՄ» համակարգը, պարաբոլանման հայելիով հեռադիտակը, ջերմաչափը, օդապարիկը, սրտագիրը, օսցիլոգրաֆը՝ թրթռագրիչը, էլեկտրավառարանը:

Ֆրանսիայում է սկիզբ դրվել էլեկտրաբուժությունը, հոգեբուժությունը: Կենսաբանության մեջ խոշոր երևույթ էր էվոլյուցիայի մասին առաջին տեսությունը, կենդանաբանության մեջ՝ տեսակ հասկացությունը: Ֆրանսիան ակնառու տեղ ունի **օվկիանոսագիտական և աշխարհագրական հետազոտություններում**: Համաշխարհային ճանաչում ունեն օվկիանոսագետ Ժակ Կուստոյի, աշխարհագետ Էլիզե Ռեյլյունի հետազոտությունները: